

Բովանդակություն

1.Ներածություն-----	2
2.Դպրոցի առաքելությունը-----	3
3. Տեղեկություններ դպրոցի մասին-----	4
4. Հաստատության գործունեությունը-----	6
4.1 Հաստատության շենքային պայմանները-----	6
4.2 Հաստատության նյութատեխնիկական բազան-----	9
4.3 Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցությունը-----	10
4.4 Համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմնի, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ-----	14
4.5 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակները-----	19
4.6 Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների, նորարարությունների ներկայացում-----	21
4.7 Չափորոշչային պահանջների համապատասխան կրթության որակի վերլուծություն-----	22
4.8 Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրը-----	26
4.9 Աշխատակազմի արժևորման , խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն-----	28
4.10 Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծություն-----	30
5. Կրթական կարիքների նկարագրությունը-----	33
5.1 Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտում- ների, համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին-----	34
5.2 Դպրոցի ենթակառուցվածքները, մարդկային ռեսուրսները և հնարավորությունները-----	35
6. Իրավիճակի վերլուծություն, ուժեղ և թույլ կողմերը-----	37
7. Նպատակներ և խնդիրներ-----	42
8. Չարգացման ծրագրի գնահատման չափանիշները-----	61
9. Վերահսկողության մեխանիզմներ-----	70

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ


Կրթությունը մարդկության առաջընթացն ու զարգացումն ապահովող հիմնական գործոնն է: Լինելով քաղաքակրթության ձեռքբերումների, սոցիալական փորձի և գիտելիքների փոխանցման միջոց՝ կրթությունը նպաստում է մարդու հոգևոր արժեքների, հասարակական հարաբերությունների, համագործակցության զարգացմանը:

Բարձր տեխնոլոգիաների համատարած ներդրման և կիրառման արդյունքում ավելի շատ մարդիկ են ներգրավվում տեխնոլոգիապես բարդ բնագավառներում, ուստի որակյալ մասնագետների պահանջը ավելի ու ավելի է աճում՝ ձեռք բերելով առաջնահերթ կարևորություն:

Նշված գործընթացների հետևանքով առավել կարևորվում է կրթության դերը՝ առաջացնելով կրթության շարունակականության և անընդհատ զարգացման անհրաժեշտություն:

Կրթական քաղաքականությունը, կրթության բովանդակությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացու ձևավորմանը ներկայացվող պահանջները, կրթության կազմակերպման սկզբունքային դրույթները դրված են կրթության համակարգի բարեփոխումների հիմքում, որի իրականացնողների շարքում են հանրակրթական դպրոցները:

Կրթությունը համարվում է հասարակության հոգևոր, տնտեսական և սոցիալական առաջընթացն ապահովող գործընթաց և նպատակաուղղված է երիտասարդ սերնդի դաստիարակմանը, անձի համակողմանի և ներդաշնակ զարգացման, ինքնադրսևորման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական պետության ստեղծմանն ու կատարելագործմանը:



Կրթությունը գիտելիքների
քանակը չէ, այլ լիակատար
ըմբռնումն ու հմուտ կիրառումն
այն ամենի ինչ գիտես:
Ա.Դիստերվիզ

2. ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետությունում կրթությունը դիտարկվում է որպես երկրի զարգացման ու հզորացման, ազգային անվտանգության ապահովման կարևոր գործոն ու երաշխիք: Հանրակրթության գլխավոր նպատակն է իրականացնել երեխաների, սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումը:

Հիմնական դպրոցի առաքելությունը սովորողներին ազգային հենքի վրա տարրական և հիմնական օղակներում որակյալ կրթությամբ ապահովելն է՝ հետագա ուսումնառությունը ավագ դպրոցներում, նախնական մասնագիտական և ուսումնական այլ հաստատություններում շարունակելու ուղղությամբ:

ՀՀ Լոռու մարզի Ծաղկաշատի հիմնական դպրոցը կրկնակի առաքելություն ունի: Լինելով շատ հեռավոր փոքր համայնքի դպրոց՝ ապահովել այնտեղ սովորող 8 աշակերտների որակյալ կրթությունը, դրա շարունակականությունը, դաստիարակել այնպիսի հայրենանվեր որակներ, որ սիրեն իրենց համայնքը, որակյալ մասնագետներ դառնալով վերադառնան և իրենց ներդրումն ունենան համայնքի բարգավաճման գործում



3. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՊՐՈՑԻ ՄԱՍԻՆ



ՀՀ Լոռու մարզի Ծաղկաշատի հիմնական դպրոցը գտնվում է Ալավերդի խոշորացված համայնքի Ծաղկաշատ գյուղում: Հեռավորությունը Ալավերդի քաղաքից 16 կմ է, ամենամոտ գյուղից Հաղպատից՝ 11 կմ :

Դպրոցի հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, գ. Ծաղկաշատ, փ.3, շ. 12

Դպրոցի էլ. փոստ՝ tsaghkashat@schools.am

Վեբ կայք՝ <https://tsaghkashat.schoolsite.am/>

Կազմակերպա-իրավական տեսակը՝ ոչ առևտրային

Իրավաբանական տեսակը՝ ՊՈԱԿ

<<ՀՀ Լոռու մարզի Ծաղկաշատի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական տարրական, հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:

Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:

Դպրոցն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, <<Կրթության մասին>>, <<Հանրակրթության մասին>>, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև, <<ՀՀ Լոռու մարզի Ծաղկաշատի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ:

<<ՀՀ Լոռու մարզի Ծաղկաշատի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ը 2003թ.-ին գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետոեգիստրի տարածքային բաժնում (վկայական՝ 03Ա058538, գրանցված 24.0.2003թ):

Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է 29.0.2010թ.-ին:

Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

Դպրոցը ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվանմամբ կլոր կնիք :

Դպրոցն ունի պաշտոնական կայք՝ <https://tsaghkashat.schoolsite.am> և Էլեկտրոնային հասցե՝ tsaghkashat@school.am: Պաշտոնական կայքում հրապարակվում են դպրոցի նախահաշիվը, ֆինանսատնտեսական հաշվետվությունները, թափուր աշխատատեղերի հայտարարությունները և դպրոցի գործունեությանը առնչվող այլ տեղեկություններ:

Դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտեր

- ✓ Պետական գրանցման վկայական
- ✓ Դպրոցի կանոնադրություն
- ✓ Լիցենզիա
- ✓ Դպրոցի շենքի սեփականության վկայական
- ✓ Դպրոցի զարգացման ծրագիր
- ✓ Ներքին կարգապահական կանոններ
- ✓ Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան (թղթային և Էլեկտրոնային)
- ✓ Առարկայական ծրագրեր
- ✓ Սովորողների շարժի մատյան
- ✓ Սովորողների անձնական գործ (թղթային և Էլեկտրոնային)
- ✓ Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան
- ✓ Աշխատողների հրամանագիրք
- ✓ Աշակերտների հրամանագիրք
- ✓ Աշխատողի անձնական գործ(թղթային և Էլեկտրոնային)

- ✓ Դպրոցի մանկավարժական, առարկայական մեթոդիավորումների, ծնողական, աշակերտական, խորհուրդների արձանագրությունների մատյաններ
- ✓ Դպրոցի ամենամյա եկամուտների և ծախսերի նախահաշիվ (թղթային և էլեկտրոնային)
- ✓ Հաստիքացուցակ (թղթային և էլեկտրոնային)
- ✓ Տարիֆիկացիոն ցուցակ(թղթային և էլեկտրոնային)
- ✓ Ուսուցչի բաց թողած և փոխարինած ժամերի հաշվառման մատյան

4 . ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Հաստատության շենքային պայմանները

Դպրոցի ներկայիս շենքը կառուցվել է 1964թ.: Դպրոցն ի սկզբանե եղել է 8-ամյա դպրոց:1989-1991թթ. դպրոցը դադարեցրել է իր գործունեությունը և միայն 1992թ. վերաբացվել՝ որպես հիմնական դպրոց:Դպրոցի շենքը հարմարեցված է՝ նախատեսված 64 աշակերտի համար:

2023-2024 ուսումնական տարվա սկզբին դպրոցում սովորում էին 9 աշակերտներ, որոնցից մեկը բնակավայրը փոխելու պատճառով տեղափոխվեց այլ դպրոց: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներ չկան: Այժմ դպրոցում սովորում է 8 աշակերտ:

2024թ.-ի սկզբին դպրոցի անձնակազմը բաղկացած է 19 հոգուց,որոնցից 11- ը մանկավարժական աշխատողներ են:

Դպրոցի շենքի մակերեսը 297,9 ք/մ է, դրսի տարածքը 440 ք/մ, հարմարեցված բացօթյա մարզահրապարակը՝ 160 ք/մ:

Դպրոցը ճակատային կողմից մեկ հարկանի է , մյուս կողմից՝ երկհարկանի ,որի առաջին հարկում գտնվում է ապաստարանի համար հատկացված կիսանկուղային հատվածը՝ 26,2 ք/մ ,նախկինում որպես սպորտդահլիճ ծառայած հատվածը՝ 91,3մ/ք և վառելափայտի պահպանման համար օգտագործվող կիսանկուղը՝ 20,7ք/մ,

Դպրոցը միահերթ է, 5-օրյա աշխատանքային շաբաթով:

Դպրոցն ունի 5 դասասենյակ,ուսուցչանոց, տնօրենի կաբինետ, ճաշարան, գրադարան, 2 սանհանգույց: Սանհանգույցները վերանորոգված են, ապահովված սանիտարահիգիենիկ պարագաներով:

Դպրոցը չունի մշտական ջրամատակարարում:

Դպրոցը ջեռուցվում է փայտի վառարաններով: Դպրոցի շենքը երբեք չի հիմնանորոգվել, բայց ժամանակ առ ժամանակ իրականացվել են արտաքին և ներքին հարդարման, ամրացման և ջրահեռացման, տանիքի մասնակի վերանորոգման աշխատանքներ, փոխվել են բոլոր պատուհանները, մուտքի դուռը, բետոնապատվել է բակի դարպասից դեպի դպրոցի մուտքը տանող ճանապարհը:

Դպրոցի տանիքի ծածկը ագրոշիֆերներից է, հատակը հիմնականում փայտյա: Վերանորոգված է մեկ դասասենյակ, հատակը լամինատապատ է:

Դպրոցը 2013թ-ից ընդգրկվել է ՄԱԿ-ի ՀՊԾ կողմից կազմակերպված «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի մեջ, որի շնորհիվ դպրոցի բոլոր սովորողները (քանակապես քիչ լինելու պատճառով) ապահովվել են տաք սննդով: 2019թ. սեպտեմբերից «Տաք սնունդ» ծրագիրն իրականացվում է պետական բյուջեի ֆինանսավորմամբ: ՀՊԾ-ի աջակցությամբ (տրամադրվել են շինարարական նյութեր և համապատասխան սարքավորումներ) և դպրոցի ինայված միջոցներով նորոգվել և համալրվել է 20ք/մ տարածքով ճաշարանը:




Ճիշտ է դպրոցի շենքային պայմանները չի կարելի բարվոք համարել, սակայն դպրոցը ապահովված է բավարար աշակերտական գույքով, համակարգչային տեխնիկայով,

ինտերնետ կապով: Համակարգչային տեխնիկան տեղադրված է 2 դասարաններում, համակարգիչները և բազմաֆունկցիոնալ սարքերը՝ ուսուցչանոցում և տնօրենի սենյակում:

Դպրոցում չկա հանդիսությունների դահլիճ, առարկայական դասասենյակներ և լաբորատորիաներ, բուժկետ:

Դպրոցի առաջին հարկում (մյուս կողմից) գտնվում է նախկինում որպես մարզադահլիճ օգտագործված 96 ք/մ տարածքը, որը ունի հիմնանորոգման կարիք:



2. Հաստատության նյութատեխնիկական բազան

Գույք, սարքավորումներ	Քանակը	Ներկա վիճակը
համակարգիչ	5	4-ը լավ, 1-ը չի աշխատում
Բազմաֆունկցիոնալ տպիչ սարք	3	1-ը լավ, 2-ը բավարար
սկսներ	1	բավարար
տպիչ սարք	1	բավարար
Հոսանքի անխափան սնուցման սարք	3	լավ
Թվային լուսացրիչ	2	լավ
Նոթբուք	2	լավ
Երաժշտական գործիք	1	բավարար
հեռուստացույց	1	բավարար
սառնարան	2	1-ը լավ, 1-ը բավարար
տեսամագնիտաֆոն	1	բավարար
Աշակերտական սեղան	15	բավարար
Աշակերտական աթոռ	25	բավարար
Գրապահարան	5	բավարար
գրատախտակ	6	լավ
Ցուցադրական պահարան	1	լավ
Շախմատի գույք	1	բավարար
Սեղանի թենիս	1	լավ
Խաղասեղան՝4 աթոռով	1	բավարար
Համակարգչային սեղան	3	բավարար
Ուսուցչի սեղան	5	բավարար
Դիմադիրով սեղան	1	լավ
Սեղան ժողովի	1	լավ
Հեռուստացույցի տակդիր	1	լավ
ցուցատախտակ	3	լավ
Գրքերի դարակ	4	լավ
բազմոց	1	բավարար
բազկաթոռ	4	բավարար
թվային ապարատ	1	բավարար
Շերտավարագույր	2	բավարար
Աթոռ ուսուցչի	4	լավ
Աթոռ խոհանոցի	12	լավ
Օֆիսային բազկաթոռ	1	լավ
Աթոռ համակարգչի	2	բավարար
փոշեկուլ	1	բավարար
Էլեկտրական սղոց	1	բավարար
Էլեկտրական ջրատաքացուցիչ	1	լավ
Էլեկտրական սալօջախ	1	լավ
Սեղան աշխատանքային խոհանոցի	1	լավ
Լվացարան խոհանոցի	1	լավ
Կշեռք Էլեկտրական	1	լավ
Էլեկտրական տաքացուցիչ	2	բավարար

բարձրախոս	1	լավ
Դարակաշար խոհանոցի	1	լավ
Վառարան(փայտ)	6	բավարար
Էլեկտրական հովիար	1	բավարար
Ջեռահար ջերմաչափ	1	լավ
տեսախցիկ	1	լավ
խոսափող	1	լավ
գրականություն	789	բավարար
Էլեկտրական սալիկ	1	բավարար
սանդուղք	1	բավարար
կրակմարիչ	4	լավ
Կարնեզ վարագույրի	40	լավ
խոհանոցի սպասք		բավարար
բեռնասայլակ	1	բավարար
գայլիկոնիչ	1	բավարար

4.3 Հաստատատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցությունը

<<ՀՀ Լոռու մարզի Ծաղկաշատի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման և խորհրդակցական մարմինները ձևավորվում են և իրենց գործունեությունը ծավալում ըստ կանոնադրության և օրենքով սահմանված կարգերի:

Դպրոցի կառավարման խորհուրդը գործում է 2021թ.-ից ,կազմված է 14 անդամից, ձևավորվել է որպես Միացյալ խորհուրդ՝ Ջաղպատի միջնակարգ և Ծաղկաշատի հիմնական դպրոցներ:

Հանդիսանալով երկու դպրոցների Միացյալ խորհուրդ՝ կառավարման խորհուրդ իր գործունեությունը հավասարաչափ է իրականացնում դպրոցների հետ՝ նիստերը գումարվում են հերթականությամբ:Հաշվի է առնվում նաև ճանապարհային դժվարությունները , մասնակիցների ներկայանալու հնարավորությունները, քննարկվող հարցերի բովանդակությունը:

Հաղպատի միջնակարգ դպրոցի և Ծաղկաշատի հիմնական դպրոցի միացյալ կառավարման խորհրդի կազմը

Հաստատված է Լոռու մարզպետի 10.05.2021թ.-ի թիվ 231-Ա որոշմամբ

	Խորհրդի անդամի անուն /ազգանունը	առաջադրող մարմինը	կրթությունը
1	Տիգրան Մխիթարյան	Լոռու մարզպետարանի ներկայացուց.	բարձրագույն
2	Վահե Մելքունյան	Լոռու մարզպետարանի ներկայացուց	բարձրագույն
3	Լևոն Սաղաթեյյան	Լոռու մարզպետարանի ներկայացուց	բարձրագույն
4	Արտեմ Վարոսյան	ՀՀ ԿԳՄՍՆ	միջնակարգ
5	Սերինե Թանդիլյան	Ծաղկաշատի ՄԻՍ	բարձրագույն
6	Սամվել Թանդիլյան	Ծաղկաշատ համայնք	բարձրագույն
7	Վարսենիկ Փիրուզյան	Ծաղկաշատի ՄԻՍ	միջին. մասնագիտ.
8	Համլետ Վերակյան	Ծաղկաշատի ԾԻՍ	միջնակարգ
9	Կարո Հակոբյան	Ծաղկաշատի ԾԻՍ	միջնակարգ
10	Կարինե Թանդիլյան	Հաղպատի ՄԻՍ	բարձրագույն
11	Կամո Օքրոյան	Հաղպատի ՄԻՍ	բարձրագույն
12	Թերեզա Պետրոսյան	Հաղպատի ԾԻՍ	միջին. մասնագիտ.
13	Հասմիկ Ալիխանյան	Հաղպատի ԾԻՍ	միջնակարգ
14	Լուիզա Սոհրաբյան	Հաղպատ համայնք	բարձրագույն


Կառավարման խորհրդի գործունեության հիմնական ուղղություններն են

- Աջակցել դպրոցի զարգացման ծրագրի կատարմանը, վերահսկել զարգացման ծրագրով նախատեսված տարեկան գործողությունների իրականացումը, լսել զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը՝տարեկան երկու անգամ և տալ եզրակացություն
- քննարկել և հավանություն տալ դպրոցների հաստիքացուցակին ու տարիֆիկացիոն ցուցակին
- տնօրենի ներկայացմամբ քննարկել ամենամյա ծախսերի նախահաշիվը,հաջորդ տարվա բյուջեի նախագիծը, բյուջետային ֆինանսավորման հայտը
- լսել տնօրենի և հաշվապահի զեկույցները փաստացի ծախսերի, շահույթի բաշխման ուղղությունների և չափի մասին
- քննարկել և հավանության արժանացնել տնօրենի զեկույցը՝ կատարված ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին
- քննարկել և հաստատել ուսուցչի թափուր տեղի մրցույթի կարգը
- հաստատել դպրոցի ներքին կարգապահական,այդ թվում աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները
- քննարկել և հաստատել ներքին գնահատման արդյունքները
- քննարկել և որոշումներ ընդունել պարգևավճարների մասին

Դպրոցի միացյալ կառավարման խորհրդի նիստերը գումարվում են յուրաքանչյուր եռամսյակը մեկ, նիստերի քաղվածքները հրապարակվում են դպրոցի կայքէջում:

Բացի Միացյալ խորհուրդը երկու դպրոցների միջև ձևավորվել է բազմաշերտ փոխհամագործակցություն, որը դրսևորվում է տարբեր շփումներով՝ միացյալ միջոցառումներ, էքսկուրսիաներ, փոխադարձ դասալսումներ, համապատասխան ուսուցչի ներգրավում որպես հանձնաժողովի անդամ՝ ուսուցչի թափուր տեղի մրցույթի ժամանակ:

Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինները



Առարկայական մեթոդական միավորումներ


- ✓ Դպրոցում գործում է 2 առարկայական մեթոդիավորում՝ բնագիտական և հումանիտար:
- ✓ Մեթոդիավորումների նիստերը տեղի են ունենում յուրաքանչյուր ամիս, որոնց մասնակցում է նաև տնօրենը, ուսուցչի օգնականը:
- ✓ Մեթոդիավորումները ուսումնական տարվա սկզբին կատարում են ուսպլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում, կազմակերպում առարկայական միջոցառումներ:
- ✓ Մեթոդիավորումների գործունեությունը խիստ կարևոր է դպրոցի ուսումնառության կազմակերպման գործում, մասնավորապես նոր չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների, դասապրոցեսում ինտերակտիվ մեթոդների կիրառման, էլեկտրոնային մատյանների վարման, ավարտական քննությունների կազմակերպման գործում:
- ✓ Մեծ է մեթոդիավորումների դերը սկսնակ ուսուցիչների հետ տարվող մասնագիտական և մանկավարժական-մեթոդական աշխատանքում:
- ✓ Մեթոդիավորումները նպաստում են ուսուցիչների արդյունավետ աշխատանքի կազմակերպմանը բազմահամակազմ դասարաններում, նախապատրաստում ատեստավորմանը:

Աշակերտական խորհուրդ

Դպրոցում սովորող 8 աշակերտներից 4-ը սովորում են 6-ից 9-րդ դասարաններում, որոնցից էլ կազմված է դպրոցի աշակերտական խորհուրդը: Աշակերտական խորհուրդը ակտիվորեն մասնակցում է ներդպրոցական կյանքին, ազատորեն արտահայտելով իր կարծիքը աշակերտներին վերաբերող հարցերի վերաբերյալ: Աշակերտական խորհուրդը համագործակցում է համայնքի, դպրոցի մյուս խորհրդակցական մարմինների հետ, մասնակցում այն նիստերին, որտեղ քննարկվում են աշակերտներին վերաբերող հարցեր:

4.4 Համագործակցություն տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

Դպրոցի համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, ծնողական համայնքի, շահառու կազմակերպությունների հետ ամրագրված է «ՀՀ պետական հանրակրթական հաստատություն» ՊՈԱԿ ի օրնակելի կանոնադրության մեջ:



համագործակցությունը համայնքի հետ

- ❖ Մասնակցություն ներհամայնքային միջոցառումներին
- ❖ Շաբաթօրյակ և ծառատունկ
- ❖ Հանդիպումներ համայնքի ներկայացուցիչների հետ
- ❖ Մասնակցություն բնապահպանական նախագծերին
- ❖ Համատեղ աշխատանք համայնքում Էկոտուրիզմը զարգացնելու ուղղությամբ
- ❖ Աջակցություն դպրոցահասակ երեխաներին
- ❖ Աջակցություն արտադպրոցական միջոցառումներին
- ❖ Համայնքի ներկայացուցիչների մասնակցությունը դպրոցում կազմակերպվող միջոցառումներին՝ վերջին զանգ, Այբբենարանի հանդես, Ամանորի միջոցառում
- ❖ Համայնքային հիմնախնդիրների վերհանում և մասնակցություն նախագծային աշխատանքներին (աղբահանության, ջրամատակարարման հետ կապված)



Համագործակցությունը ծնողների հետ

- ❖ Կանոնավոր մասնակցություն ծնողական ժողովներին
- ❖ Մասնակցություն ծնողագուրկ և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների խնդիրների լուծմանը

- ❖ Աջակցություն դպրոցի կրթական գործունեության հետ կապված տարբեր հարցերի լուծմանը և նախագծերի մշակմանը
- ❖ Ծնողների կողմից տեղեկատվության տրամադրում սովորողների կարիքների և հետաքրքրությունների մասին:
- ❖ Դպրոցական սնունդ ծրագրի շրջանակներում ծնողների կողմից ներդրում
- ❖ Ակտիվ մասնակցություն արտադպրոցական միջոցառումներին, էքսկուրսիաներին
- ❖ Օժանդակություն դպրոցի տարածքում գտնվող ջերմոցի մշակման աշխատանքների



Համագործակցություն «Դասավանդիչ Հայաստան» կազմակերպության հետ

- ❖ Թափուր տեղերի համալրում համապատասխան ուսուցիչներով

- ❖ Մասնակցություն կազմակերպության կողմից կազմակերպված նախագծերին և միջոցառումներին(ջերմոցի կառուցում և գործարկում,մրցույթ-վիկտորինաներ այլ ուսումնական հաստատությունների հետ)
- ❖ Այցեր Վանաձորի տեխնոլոգիական կենտրոն
- ❖ Այցեր Վանաձորի <<Տերակոտա>> ստուդիա՝ խեցեգործության



Համագործակցություն Ալավերդի քաղաքի կրթօջախների և մշակութային կենտրոնների հետ

- ❖ Այցեր միջին մասնագիտական հաստատություններ(Ալավերդու պետական քոլեջ, Ալավերդու ուսումնարան)
- ❖ Հանդիպում ավագ դպրոցների ուսուցիչների հետ

- ❖ Սեմինար-խորհրդատվություններ
- ❖ Այցեր Ալավերդու Մշակույթի տուն և Արվեստի դպրոց՝հանդիպումներ արվեստագետների և արհեստագործ վարպետների հետ

Համագործակցություն ԿԳՄՄՆ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, ԿԶՆԱԿ-ի հետ

- ❖ Կրթության կառավարման լիազոր մարմինների որոշումների պատշաճ իրականացում
- ❖ Մասնակցություն ԿԳՄՄՆ- ի կողմից կազմակերպվող ծրագրերին և միջոցառումներին
- ❖ Դպրոցում ՏՀՏ-ի ներդրում, ծրագրերի կառավարում
- ❖ Դպրոցների կայքէջերի ստեղծում
- ❖ Առկա և հեռավար վերապատրաստումներ
- ❖ Նոր դասագրքերի քննարկումներ
- ❖ Էլեկտրոնային ուսումնական նյութերի տրամադրում
- ❖ Ավարտական պետական քննությունների կազմակերպում
- ❖ Խորհրդատվության տրամադրում emis.am-ի հետ կապված

Համագործակցություն ԱԻՆ-ի, Ոստիկանության հետ

- ❖ տազնապ, տարհանման կազմակերպում
- ❖ ԱՌՆ պլանի կազմում
- ❖ զրույց, դասախոսություն՝ Ոստիկանության Ալավերդու բաժնի հետ (անչափահասների տեսուչ)

- Դպրոցը չունի երկարորյա ուսուցում
- Դպրոցը չունի հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդներ

4.5 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակները

Ճաղկաշատի հիմնական դպրոցի մանկավարժական համակազմը բաղկացած է 11 մանկավարժական աշխատողներից, որից

- Տնօրեն - 1


- Բարձրագույն կրթությամբ և համապատասխան որակավորմամբ – 8
- Ուսուցչի օգնական -1
- Գրադարանավար-1

- ❖ Դպրոցի ուսուցիչների 20% -ը սահմանված կարգի համաձայն յուրաքանչյուր տարի մասնակցում է պարտադիր ատեստավորումմանը:
- ❖ 2023-2024 ուսումնական տարում դպրոցի տնօրենը և 7-րդ դասարանում (դպրոցում 2-րդ և 5-րդ դասարաններ չկան) դասավանդող բոլոր ուսուցիչները անցել են ՀՊԶ-ով սահմանված պահանջների ապահովման նպատակով համապատասխան վերապատրաստման դասընթացներ:
- ❖ Դպրոցում 1-ին տարակարգ ունի 1 ուսուցիչ՝Անահիտ Մուսայեյան(պատմություն)
- ❖ Կամավոր ատեստավորում անցած ուսուցիչներ չկան:
- ❖ Դպրոցի բոլոր ուսուցիչներն ունեն համապատասխան մասնագիտական պատրաստվածություն, մեծամասամբ տիրապետում են ինտերակտիվ մեթոդներին, օգտվում են armedu.am, lib.armedu.am, Պաշարների շտեմարան կրթական ռեսուրսներից
- ❖ Դպրոցում պարբերաբար իրականացվում են փոխադարձ դասալսումներ,դասալսումներ մ/մ նախագահների և տնօրենի կողմից, կատարվում քննարկումներ:
- ❖ Հաստատության 11 մանկավարժական աշխատողներից 5-ը երթևեկող ուսուցիչներ են,որոց տրանսպորտային ծախսերի փոխհատուցումը կազմակերպում է դպրոցը Կամաձայն կարգի:
- ❖ Հաստատության մանկավարժական համակազմում հիմնականում երիտասարդ մասնագետներ են, ովքեր ավելի հեշտ են յուրացնում և իրականացնում նորամուծություններ
- ❖ Դպրոցի մանկավարժներից միայն մեկն է կենսաթոշակային տարիքի:
- ❖ Դպրոցում առկա են անհրաժեշտ բարենպաստ պայմաններ մանկավարժական անձնակազմի փոխհամագործակցության և ինքնակրթության համար.(դպրոցում կան անհրաժեշտ ուսումնաստեխնիկական միջոցներ):
- ❖ Ուսուցիչներն ուսումնադաստիարակչական գործընթացում ապահովում են աշակերտակենտրոն մոտեցում:

Տվյալներ ուսուցչական անձնակազմի վերաբերյալ

ցուցանիշ	2020-2021ուս	2021-2022ուս.	2022-2023ուս.
----------	--------------	---------------	---------------

	տարի	տարի	տարի
Ուսուցիչների ընդհանուր թիվը	8	8	8
Բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչների թիվը	7	7	7
Միջին մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչների թիվը	1	1	1
Տարակարգ և կամավոր ատեստավորում անցած ուսուցիչների թիվը	0	1	2
Վերջին 3 տարում վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը	2	2	2
ՏՀՏ մեթոդներին տիրապետող և կիրառող ուսուցիչների թիվը	7	7	7
Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը կամ դրույքաչափը	0,61	0,78	0,78



Դպրոցի ոչ բոլոր առարկաներն են դասավանդում համապատասխան մասնագետ ուսուցիչները: Որոշ առարկաների համապատասխան որակավորում ունեցող մասնագետների բացակայության պատճառով պարբերաբար հայտարարվում են ուսուցչի թափուր տեղի համար մրցույթներ: Խնդիրը լուծվում է երկու տարբերակով.

1. Դասավանդում են հարակից առարկաների ուսուցիչները,
2. <<Դասավանդիչի Հայաստան>> կազմակերպության շահառուները:

Ուսուցչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթներին չմասնակցելու պատճառը դպրոցի գտնվելու վայրն է, ճանապարհների անբարեկարգ վիճակը և հասարակական տրանսպորտի բացակայությունը:

Հեռավար ուսուցում կազմակերպելը կապված է համացանցի դժվար հասանելիության հետ , քանի որ դպրոցը գտնվում է հեռավոր համայնքում և հասանելի է միայն 1 կապի օպերատոր:

4.6 Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների, նորարարությունների ներկայացում

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների արագ զարգացումը և ներդրումը կրթական գործընթացում ապահովում է կրթության որակի բարելավումը և մատչելիությունը, նպաստում է սովորողների առաջադիմության բարձրացմանը, դասավանդման որակի կատարելագործմանը, խթանում ստեղծագործ մտածողությունը: Դպրոցն օգտվում է Էլեկտրոնային տարբեր կրթական հարթակներից՝ Microsoft TEAMS, Google Classroom և այլ:

Դպրոցում ՏՀՏ-երը կիրառվում են

- ուսումնադաստիարակչական գործընթացում
- դպրոցավարության և Էլեկտրոնային մատենավարության մեջ
- ուսուցիչների և վարչական աշխատողների հեռավար վերապատրաստումների ժամանակ
- ծնողների և այլ շահառու կազմակերպությունների հետ համագործակցության ժամանակ
- դպրոցական միջոցառումների ժամանակ
- ֆինանսատնտեսական գործունեության կազմակերպման ժամանակ
- Պաշարների շտեմարանում և այլ ուսումնական կայքերում նյութեր տեղադրելու կամ դրանցից օգտվելու ժամանակ

Դպրոցը բավարար չափով ապահովված է ՏՀՏ սարքավորումներով(4 համակարգիչ, 2 նոթբուկ, 2 լուսացրիչ): Դպրոցի 2 դասարաններում առկա են համակարգչային սարքավորումներ: Դպրոցը ապահովված է ինտերնետ կապով, առկա է Wi-Fi կապ: Համակարգչային դասարանի բացակայության պատճառով դասարաններից մեկում տեղադրված են 2 համակարգիչ: Դպրոցը ունի պաշտոնական և ֆեյսբուքյան

Էջեր:Դպրոցը ՏՀՏ միջոցների կիրառմամբ ակտիվ գործունեություն է ծավալում կրթական բոլոր հարթակներում(Պաշարների շտեմարան,ԳԹԿ ,ԿՏԱԿ):

ՏՀՏ-երի կիրառումը ստեղծում է արդյունավետ միջավայր ուսումնառության համար, ապահովում տեղեկատվության ձեռքբերման և մշակման հնարավորություն,բարելավում դպրոցի կառավարումը՝ հանդիսանալով փոխներգործուն հաղորդակցության միջոց: Մանկավարժները և սովորողները օգտվում են նաև թվայնացված գրականությունից՝ դասագրքերից և ձեռնարկներից:

4.7 Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը

Կրթության որակի վերլուծությունը սովորողի կրթական գործունեության և պատրաստվածության աստիճանն է՝ չափորոշչային պահանջներին համապատասխան : Դպրոցում երաշխավորված է երեխաների՝ կրթությունն ստանալու հիմնարար իրավունքը:

Դպրոցի գործունեության նպատակը սովորողների կրթության որակի բարձրացումն է՝ պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան:Կրթության որակի ամենակարևոր մասը ուսումնառության արդյունքներն են, ըստ որի հիմնական դպրոցն ավարտած սովորողներին շարունակում են հետագա ուսումնառությունը:

Կրթության որակի վերլուծությունը հնարավորություն է տալիս գնահատել առկա վիճակը,սահմանել նոր նպատակներ,գտնել դրանց հասնելու ուղիները, ապահովել ՀԴԶ-ով սահմանված վերջնարդյունքները:

Ծաղկաշատի հիմնական դպրոցի կրթության որակի վրա ազդում է բազմահամակազմ դասարանների առկայությունը, որոշ առարկաների մասնագետ ուսուցիչների բացակայությունը:

Պետք է ամենօրյա համալիր աշխատանք իրականացնել ուսման որակը և սովորողների առաջադիմությունը բարձրացնելու համար:

Կրթության որակի բարձրացման նպատակով շարունակաբար իրականացվում են հետևյալ աշխատանքները.

- ❖ Կրթական կարիքի գնահատման դիտարկում
- ❖ Մանկավարժների կողմից ցուցաբերված անհատական մոտեցում
- ❖ Սովորողների առաջադիմության մշտադիտարկում և վերլուծություն

- ❖ Արդի կրթական մեթոդների և նորագույն տեխնոլոգիաների յուրացում
- ❖ Սովորողների խրախուսում
- ❖ Սովորողների գեղագիտական, ռազմահայրենասիրական դաստիարակություն, նրանց ստեղծագործական կարողությունների վերհանում և զարգացում
- ❖ Սովորողների հմտությունների, կարողությունների ու դիրքորոշումների զարգացում
- ❖ Սովորողների առողջության պահպանում և անվտանգության ապահովում
- ❖ Ներդպրոցական, արտադպրոցական նպատակային միջոցառումների կազմակերպում
- ❖ Ծնողների ներգրավում սովորողների կրթության որակի բարձրացման և կարիքների բացահայտման գործընթացին

Դպրոցի աշակերտների սակավաթիվ լինելու հանգամանքը չի խանգարում, որ դպրոցում պարբերաբար կազմակերպվեն ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներ: Կազմակերպվող բոլոր միջոցառումներին մասնակցում են դպրոցի բոլոր աշակերտները, լինի դա <<Վերջին զանգ>>, <<Այբբենարանի հանդես>>, թե Ամանորի միջոցառում և մշտապես խրախուսվում են ու պարգևատրվում: Պետք է նշել, որ շատ մեծ է ծնողների մասնակցությունը աշակերտների հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքներում:


Ընդհանուր տվյալներ սովորողների վերաբերյալ				
	2020-2021	2021-2022	2022-2023	2023-2024
Աշակերտների թիվը ուս. տարվա սկզբին	12	14	9	9
Աշակերտների թիվը ուս. տարվա վերջին	13	8	7	
Ուս. տարվա ընթացքում ընդունված աշակերտներ	1			1
Ուս. տարվա ընթացքում տեղափոխված աշակերտներ		3		1
Առաջին դասարան ընդունված աշակերտներ	1	1	1	1
Թ-րդ դասարանը ավարտած աշակերտներ		3	2	

Կրթության որակն ապահովվող ուսումնական աշխատանքներ

- ✓ Օրինակելի ուսումնական պլանի հիման վրա կազմված դպրոցի տվյալ ուս. տարվա ուսումնական պլան:

- ✓ Դպրոցական բաղադրիչով նախատեսված ժամաքանակի բաշխումը ստ սովորողների նախասիրությունների և կարիքների:
- ✓ Թեմատիկ պլանների համապատասխանություն առարկայական չափորոշիչներին և ծրագրերին , դրանց վերահսկումը մեթոդիավորումների նախագահների կողմից :
- ✓ Մեթոդիավորումների նախագահների և դասղեկների տարեկան: աշխատանքային պլանների կազմում ,դրանց տեղադրում <<Պաշարների շտեմարանում>> և դպրոցի կայքում:
- ✓ Ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի կազմում ` դրա համապատասխանությունը դպրոցի կարիքներին:
- ✓ Ուսուցիչների մասնագիտական շարունակական կատարելագործում:
- ✓ Կրթական գործընթացում ընդգրկված բոլոր մասնակիցների միջև փոխգործակցության և առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի առկայություն:

Կրթության որակը կարելի է չափել դպրոցում իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքների մշտադիտարկմամբ և վերլուծությամբ: Կիսամյակների վերջում և տարեվերջին ներկայացվում է կատարողականի հաշվետվություն, ամփոփվում են բոլոր պատասխանատուների աշխատանքները, գնահատվում ձեռքբերումները,մատնանշվում` բացթողումները: Կրթության որակի չափման միջոց է հանդիսանում նաև դպրոցի ներքին գնահատումը, որտեղ ներառված են ներկայացուցիչներ բոլոր շահառու խմբերից(կառավարման խորհուրդ, մանկավարժական խորհուրդ, ծնողական խորհուրդ,տեղական ինքնակառավարման մարմին):



2020-2021 ուս. տարվա գիտելիքների ստուգման արդյունքներ

N	Անուն ազգանուն	Գնահատականները ըստ առարկաների					
		4-րդ դասարան					
		մայրենի	մաթեմ				
1	Գևորգյան Անահիտ	8	7				
2	Մակարյան Անգելինա	8	8				
3	Վերանյան Աստվ	8	8				

2020-2021 ուս. տարում 9-րդ դասարանը ավարտող սովորողներ չկան

2021-2022 ուս. տարվա գիտելիքների ստուգման, ավարտական և կենտրոնացված ավարտական քննությունների արդյունքներ

	Անուն ազգանուն	Գնահատականները ըստ առարկաների						
		4-րդ դասարան						
		մայրենի	մաթեմ					
1	Հակոբյան Նվեր	7	7					
		9-րդ դասարան						
		Հայոց լ	Գրական	մաթեմ	անգլեր	Ֆիզիկա	Հայ.պատ	Ֆիզկ
1	Գալստյան Մարիետա		8	12	7	11	9	9
2	Հակոբյան Մերի		8	12	9	12	8	9
3	Վերանյան Բակուր		7	11	7	13	8	10

2022-2023 ուս. տարվա ավարտական քննությունների արդյունքներ

	Անուն ազգանուն	Գնահատականները ըստ առարկաների						
		9-րդ դասարան						
		Հայոց լ	Գրական	մաթեմ	անգլեր	Ֆիզիկա	Հայ.պատ	Ֆիզկ
1	Մակիկյան Միլենա	16	9	16	9	16	9	9
2	Քառյան Վանյա	12	6	10	6	10	6	9

2022-2023 ուս. տարում 4-րդ դասարանում աշակերտներ չկան

2021-2023 թթ Ծաղկաշատի հիմնական դպրոցն ավարտած սովորողների հետագա ուսումնառությունը

- Վերանյան Բակուր -Սոնթե Մելքոնյանի անվան ռազմական վարժարան

- Գալստյան Մարիետա -Ալավերդու Հյուսիսային Համալսարանին կից քույրական ուսումնարան
- Հակոբյան Մերի – Ալավերդու պետական քոլեջ
- Մակինյան Միլենա – Ալավերդու պետական քոլեջ
- Զառյան Վանյա -Ալավերդու արհեստագործական ուսումնարան

Դպրոցում ստեղծված են հավասար պայմաններ բոլոր սովորողների համար՝անկախ նրանց կարիքներից և սոցիալական վիճակից:Դպրոցի առաքելությունն է ապահովել սովորողների արդյունավետ ուսումնառությունը՝ նրանց ընդունակություններին, կարողություններին և նախասիրություններին համապատասխան:

4.8 Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրը

Ուսումնական հաստատությունում կրթական գործընթացի մեջ ընդգրկված են ուսուցիչներ, ծնողներ, աշակերտներ,որոնց միջև ձևավորվում է փոխհամագործակցության,փոխըմբռնման, ինքնադրսևորման այնպիսի միջավայր ,որտեղ կարևորվում է ազատ խոսքը, քննադատական մտածողությանը, համատեղ գործողությունների, որոշումների ընդունման կարևորությունը :

Դպրոցի արժեքային միջավայրը ձևավորվում է ժողովրդավարական սկզբունքների հիման վրա ,որտեղ կարևորվում է յուրաքանչյուրի կամարտահայտումը,հաշվի է առնվում դպրոցի բոլոր շահառու խմբերի կարծիքը: Դպրոցում պետք է ապահովված լինի համագործակցային հարաբերությունների մթնոլորտը, թիմային աշխատանքը՝ թե մանկավարժական աշխատողների, թե սովորողների շրջանում,որը ձևավորում է բազմակարծիք միջավայր ՝ապահովելով ավելի արդյունավետ համագործակցություն:

Կատարվող աշխատանքները

- ✓ բոլոր սովորողների կրթություն ստանալու իրավունք, այդ թվում ԿԱՊԿՈՒ սովորողների
- ✓ սովորողների շահերի և իրավունքների պաշտպանություն
- ✓ դպրոցում անհրաժեշտ անվտանգային և սանիտարահիգիենիկ պայմանների ապահովում
- ✓ աշակերտական և մանկավարժական համակազմի ազատ կամարտահայտության իրավունք

- ✓ հաստատության խորհրդակցական մարմիններում մասնակցային կառավարման խրախուսում
- ✓ դպրոցում բռնության և հալածանքի(բուլինգ) ցանկացած ձևի կանխարգելում՝ թե ֆիզիկական ,թե հոգեբանական
- ✓ սոցիալական խտրականության վերաբերմունքի բացառում
- ✓ դպրոցում բարենպաստ բարոյահոգեբանական միջավայրի ապահովում
- ✓ սովորողների ինքնադրսևորման, կամարտահայտման պայմանների ապահովում
- ✓ հակահամաճարակային պայմանների ապահովում և իրազեկում
- ✓ սովորողների խրախուսում
- ✓ դպրոց-ուսուցիչ-աշակերտ-ծնող համագործակցություն և ներդաշնակ կապ

Ժողովրդավարական սկզբունքների համաձայն դպրոցում պետք է ձևավորվի այնպիսի միջավայր,որտեղ յուրաքանչյուրը առավելագույն մասնակցություն ունենա կրթական գործընթացին,որոշումների կայացմանը:Դպրոցի առջև ծառայած բոլոր խնդիրների լուծումը պահանջում է համակողմանի ուսումնասիրություն ,հանրային քննարկումներ՝ շահագրգիռ խմբերի կողմից,որի ժամանակ կառաջարկվեն արդյունավետ լուծումներ :

4.9 Աշխատակազմի արժևորման ,խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն

Դպրոցում որակյալ կրթության մատուցման բարելավման և կառավարման ժողովրդավարական սկզբունքների ապահովման գործում մեծ է դպրոցի ողջ աշխատակազմի դերն ու պատասխանատվությունը, որոնց աշխատանքը պետք է արժևորել և խրախուսել :

Անձնակազմի արժևորման նպատակով շարունակաբար կիրառվում են խրախուսման տարատեսակ ձևեր, որոնք ներառում են ուսումնադաստիարակչական գործընթացի բոլոր ոլորտները՝ ուսուցման որակ ,դպրոցական և արտադպրոցական աշխատանքներ, համագործակցություն ծնողների հետ:

- ✓ Դպրոցում հստակ ձևավորված է անձնակազմի արժևորման և խրախուսման մեթոդներ:
- ✓ Հաստատության մանկավարժները խրախուսվում են դպրոցում կազմակերպված տարբեր միջոցառումների, տոների և մասնագիտական օրվա առիթով:
- ✓ Անձնակազմի ստեղծագործական աշխատանքը, ինքնակրթությունը և մասնագիտական կատարելագործումը գնահատվում է որոշակի ձևաչափով:
- ✓ Դպրոցն օժանդակում է մանկավարժների պարբերաբար մասնակցությանը ԿՁՆԱԿ-ի, Նախարարության կողմից երաշխավորված այլ կազմակերպություններ կողմից կազմակերպված սեմինարներին, վերապատրաստումներին:
- ✓ Դպրոցը հորդորում է ուսուցիչներին՝ մասնակցելու հերթական և կամավոր ատեստավորմանը:
- ✓ Դպրոցն ուղղորդում է ուսուցիչներին՝ մասնակցելու որակավորման տարակարգին :
- ✓ Դպրոցը խրախուսում և արժևորում է իր ուսուցչին , նրա աշխատանքը, դրանով իսկ բարձրացնելով նրա հեղինակությունը , հասարակության, ծնողների և աշակերտների մոտ:
- ✓ Դպրոցը աջակցում է սկսնակ ուսուցիչների մասնագիտական աջակցության գործընթացին :
- ✓ Խթանվում են նորամուծությունների յուրացման և կիրառման նկատմամբ մանկավարժների ձգտումները:
- ✓ Խթանվում և աջակցություն է ցուցաբերվում այն մասնագետներին, որոնք չունեն մանկավարժական որակավորում՝ վերապատրաստումների միջոցով 30 կրեդիտ հավաքելու և շարունակելու աշխատանքը:
- ✓ Մեթոդիավորումների կողմից ապահովվում է մեթոդական աջակցությունը սկսնակ ուսուցիչներին:
- ✓ Անձնակազմի պարտաճանաչ և բարեխիղճ անդամների աշխատանքը հրապարակվում և խրախուսվում է պատվոգրերով, դրամական միջոցներով, երախտագիտության միջոցառումներով:
 Խրախուսման միջոցները խթանում են աշխատակիցների պատասխանատվության զգացողությունը, նպաստում անձի՝ մասնագիտական որակների զարգացմանը և կատարելագործմանը:
 2020թ., 2021թ., 2022թ. -ին դպրոցի բոլոր աշխատակիցները տարեվերջին ստացել են պարգևավճար բարեխիղճ և նվիրված աշխատանքի համար:

ՊԱՐԳԵԼԱԿՃԱՐ



4.10 Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծություն

Դպրոցի ֆինանսական գործունեության նպատակը սովորողների ուսումնառության համար անհրաժեշտ միջավայրի ապահովումն է՝ համապատասխան ֆինանսական միջոցներով:

Դպրոցը ֆինանսավորվում է հիմնադրի՝ Հայաստանի Հանրապետության կողմից, պետական բյուջեի միջոցներից: Ֆինանսավորման չափը ձևավորվում է իրականացվող հանրակրթական ծրագրերի համապատասխան ըստ սովորողների թվի: Դպրոցին հատկացված ֆինանսական միջոցները ձևավորվում են ըստ «Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգի» ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշմամբ սահմանված ֆինանսավորման հին կարգի, քանի որ Ծաղկաշատի հիմնական դպրոցը ըստ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1790-Ա/2 հրամանով հաստատված ՀՀ կրթական որակյալ ծառայությունների հասանելիության ապահովման ծրագրի՝ ներառված պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ցանկում :

Դպրոցի խնդիրն է արդյունավետ պլանավորել ֆինանսական միջոցները, համապատասխանեցնելով դպրոցի և սովորողների կարիքներին:


Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ:

Դպրոցի բյուջեի պլանավորումը ,նախահաշվի նախագծի կազմումը կատարվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին և սահմանված կարգի համաձայն , բյուջետային օրացույցին համապատասխան քննարկվում կառավարման, մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների կողմից՝ առաջարկություններ ստանալու նպատակով, ապա ներկայացվում լիազոր մարմնի հաստատմանը:

Յուրաքանչյուր տարվա ֆինանսատնտեսական գործունեության հետ կապված համապատասխան փաստաթղթերը՝ նախահաշիվը, եռամսյա հաշվետվությունները տեղադրվում են դպրոցի պաշտոնական կայքում:


Յուրաքանչյուր տարեվերջին անց է կացվում ապրանքանյութական արժեքների գույքագրում:Դպրոցն ունի գնումների համակարգող , գնումների գործընթացը կատարվում է սահմանված կարգի համաձայն:

Դպրոցի բյուջեի ծախսման ուղղությունները



■ Աշխատավարձ 77%
 ■ Էլեկտրաէներգիա և ջեռուցում 2,2%
 ■ ընթ. վերանորոգում 2,1%
 ■ գույք և համակարգչային տեխնիկա 1,5%
 ■ այլ ծախսեր 9,9%

Դպրոցի ֆինանսական ցուցանիշները



2020-2023թթ. դպրոցի խնայած միջոցներով իրականացված աշխատանքները

- Վերանորոգվել է դպրոցի ճաշարանը
- Ձեռք են բերվել նոր համակարգիչներ
- Համալրվել է դպրոցի գույքը
- Կատարվել են դպրոցի շենքի ներքին հարդարման աշխատանքներ

հերթական ատեստավորման համար անցկացվող վերապատրաստումներին հատկացված միջոցներ

Յուրաքանչյուր տարի հերթական ատեստավորմանը մասնակցում են դպրոցի ուսուցիչների 20%-ը

- 2020-2021 ուս. տարի – 41.600.
- 2021-2022 ուս. տարի - 48.000
- 2022-2023 ուս. տարի – 24.000

Երթևեկող աշխատակիցների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում

տարի	Աշխատողների քանակը	Փոխհատուցված գումարը
2021	3	220.000
2022	4	423.000
2023	6	483.000

2023-2024 ուս. տարում Ծաղկաշատի հիմնական դպրոցում սովորում է 8 աշակերտ, որոնք կոմպլեկտավորված են 5 միավոր դասարաններում

Դպրոցի աշակերտների թիվը վերջին 2 տարիների ընթացքում նվազել է ,կապված համայնքի սոցիալ -տնտեսական պայմանների հետ:

2023-2024 ուս. տարում դպրոցն ունի 19 աշխատակից, որից 11-ը մանկավարժական աշխատողներն են: Բոլոր 8 ուսուցիչներն ունեն բարձրագույն կրթություն:

Վերջին երեք տարիների աշակերտ-անձնակազմ , աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը

	2020-2021 ուս.տ	2021-2022 ուս. տ	2022-2023 ուս. տ
Աշակերտների թիվը	13	9	9
Անձնակազմի թիվը	14	15	19
հարաբերակցությունը	1/0,9	1/0,6	1/0,4
Ուսուցիչների թիվը	8	8	8
հարաբերակցությունը	1/1,6	1/1,1	1/1,1

5. ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի գործունեության նպատակը յուրաքանչյուր սովորողի զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցությունն ու հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

Դպրոցի գործունեությունը նպատակաուղղված է բավարարելու սովորողի հետևյալ կրթական կարիքները

- Կարողունակ և համակողմանիորեն զարգացած
- Հայրենասեր և ազգասեր
- Բազմակողմանի զարգացած
- Մասնագիտորեն կողմնորոշված և մրցունակ
- Սեփական դիրքորոշում ունեցող
- Համամարդկային և ազգային արժեքներ կրող
- Մարդասիրության ոգով դաստիարակված

Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման ,սովորողի կրթական կարիքների բավարարման համար անհրաժեշտ է ուսուցման և ուսումնառության արդյունավետ կազմակերպում,որի հիմքում ներդրված է ազգային արժեքներ կրող ապագա քաղաքացու ձևավորման առաջնահերթությունը::

Ծաղկաշատի հիմնական դպրոցն իրականացնում է իր գործունեությունը մի քանի ուղղություններով՝ դպրոցի սովորողների կրթական կարիքները բավարարելու համար.

- **Դպրոցի կառավարման միջոցով** բացահայտել դպրոցի առկա կրթական կարիքները և գտնել դրանց արդյունավետ լուծման տարբերակները:Դպրոցը չունի տնօրենի տեղակալներ ,ուստի գործադիր տնօրենը իրականացնում է դպրոցի գործունեության ընթացիկ կառավարումը մեթոդ.միավորումների նախագահների աջակցությամբ՝համագործակցելով կառավարման և խորհրդակցական մարմինների հետ:
- **Ուսումնադաստիարակչական աշխատանքների** իրականացումը մանկավարժական անձնակազմի կողմից ընդգրկում է ոչ միայն ուսումնադաստիարակչական պրոցեսը,այլև արտադպրոցական միջոցառումները:Դպրոցում մասնագետ մանկավարժների պակասը ուղղակիորեն ազդում է կրթության որակի վրա,քանի որ որոշ առարկաներ դասավանդում են հարակից առարկաների մասնագետներ:Աշակերտների սակավաթվության պատճառով դպրոցում առկա են բազմահամակազմ դասարաններ,որը ևս անդրադառնում է կրթության որակի վրա:Դասարաններում համապատասխան թվով աշակերտների բացակայության պատճառով ՀԴՉ-ով նախատեսված խմբակներ չեն գործում:

